Վահրամաբերդ

Վահրամաբերդ բնակավայրը վերանվանվել 1946 թվականին՝ ի պատիվ միջնադարի հայ զորավար Վահրամ Պահլավունու, վարչական տարածքը կազմում է 819.62 հա իսկ բնակչությունը 1438 մարդ: Բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 10կմ հեռավորության վրա: Բնակավայրը տեղադրված է Ախուրյան գետի ձախափնյա հովտում՝ ծովի մակարդակից 1650մ բարձրության վրա: Վահրամաբերդից հարավ-արևմուտք, ձորամիջում, գտնվում են Մարմաշենի վանքը (IX-XIII դարեր) և XIII դարում կառուցված կամուրջը: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ, կառուցման ավարտական փուլում է մանկապարտեզի շենք: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը հողագործությունն է: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Բնակչությունը զբաղվում է հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, պտուղների մշակությամբ, անասնապահությամբ, թռչնապահությամբ: